(օբյեկտի անվանումը, հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

**կառուցման** արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են **«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»**

(Նախագծային փաստաթղթերի փուլը,

**«ՄՈԴՈՒԼ ՍՊԸ » -ի** կողմից:

նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **30 օրվա** ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

**Կ. Տ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2021 թվականի N 1495

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի N 698 ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿԻ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ և 38.1-րդ հոդվածների, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի նոյեմբերի 15-ի N Կ-15112021-07-0073 որոշումը և Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի N Ք-3550).

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 09-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի հատակագծերը հաստատելու և հասցեներ տրամադրելու մասին» N 698 որոշման գործողությունը մասնակի դադարացնել՝ չեղյալ ճանաչել որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ տողը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 25
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 նոյեմբերի 2021 թվականի N 1494

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՉԱՓԻՉ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 79 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 45-րդ, 50-րդ, 51-րդ, 55-րդ և 62-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Ալբերտ Հարությունյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 17-ի N Ք-3522).

1. Ալբերտ Հարությունյանին պատկանող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված Կոտայքի նոտարական տարածքի նոտարի գրանցամատյանում N 10897) Աբովյան քաղաքի Չափիչ գործարանի հանրակացարանի 3-րդ շենքի թիվ 79 բնակարանը վերահասցեավորել՝ քաղաք Աբովյան, Հանրակացարանային թաղամաս, 3 շենք, 79 բնակարան:

2. Ալբերտ Հարությունյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալբերտ Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 25
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 նոյեմբերի 2021 թվականի N 1493

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՏԱՅՔԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 11 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Էլզա Թովմասյանի լիազորած անձ Հռիփսիմե Գյուրջյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 19-ի N Ք-3283).

1. Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի թիվ 11 ա հասցեում գտնվող (հիմք՝ 2021 թվականի հոկտեմբերի 04-ի իրավունք սահմանող փաստաթղթի պատկանելության իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին N 261 նոտարական ակտ՝ գրանցված Կոտայքի մարզի նոտարական տարածքի նոտարի գրանցամատյանում N 7675) անշարժ գույքը վերահասցեավորել՝ քաղաք Աբովյան, Կոտայքի փողոց, 11/1 բնակելի տուն:
2. Էլզա Թովմասյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էլզա Թովմասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 25
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2021 թվականի N 1492

## ՍՈՍ ԽԵՉՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշման և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Սոս Խեչոյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի N Ք-3557).

1. Թույլատրել փոփոխելու Սոս Խեչոյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2018 թվականի հունվարի 26-ի N 26012018-07-0044 վկայական) Աբովյան քաղաքի Ս. Մնացականյան փողոցի թիվ 1/18 հասցեում գտնվող 135.64 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման հողամաս:

2. Սոս Խեչոյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 18 570 (տասնութ հազար հինգ հարյուր յոթանասուն) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոս Խեչոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 24
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2021 թվականի N 1491

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 50 ՇԵՆՔԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի հունվարի 26-ի N 06-Ա որոշումների, հաշվի առնելով Սպարտակ Վարդանյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 05-ի N Ք-3174) և այն հանգամանքը, որ ավտոտնակի զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը չի համարվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս.

1. Սպարտակ Վարդանյանին պատկանող (հիմք՝ 2005 թվականի մարտի 03-ի N 1152293 վկայական, կադաստրային համար՝ 07-002) Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 50 շենքի մոտ գտնվող ավտոտնակին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ քաղաք Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 4/200 ավտոտնակ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար առանձնացված 44.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, հողի կադաստրային արժեքով օտարել Սպարտակ Վարդանյանին:

3. Սպարտակ Վարդանյանը պարտավոր է.

1) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար.

2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին մուծել 462 610 (չորս հարյուր վաթսուներկու հազար վեց հարյուր տասը) դրամ՝ հողամասի գինը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սպարտակ Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 24
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2021 թվականի N 1490

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «ա» ենթակետի, հաշվի առնելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի մայիսի 10-ի տեխնիկական եզրակացությունը և այն հանգամանքը, որ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Դերենիկ Հարությունյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի օգոստոսի 25-ի N Ք-2824).

1. Դերենիկ Մուշեղի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի օգոստոսի 09-ի N 09082021-07-0144 վկայական) Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցի 3 շենքի 1 բնակարանին կից՝ «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի օգոստոսի 10-ին կազմված շինությունների հատակագծի (կցվում է) համաձայն՝ ինքնակամ իրականացված 18.66 քառակուսի մետր արտաքին մակերեսով կցակառույցը համարել օրինական:
2. Սահմանել, որ օրինական են ճանաչվում նաև սույն որոշման 1-ին կետում նշված շենքում առկա, շենքի ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից իրականացված բոլոր ինքնակամ կառույցները:
3. Կցակառույցի զբաղեցրած հողամասն անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով, փոխանցել Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցի 3-րդ շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
4. Դերենիկ Հարությունյանը պարտավոր է ինքնակամ իրականացված 18.66 քառակուսի մետր արտաքին մակերեսով կցակառույցի օրինականացման համար Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին մուծել 59 824 (հիսունինը հազար ութ հարյուր քսանչորս) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դերենիկ Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 24
ք. Աբովյան

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ, ք. Աբովյան Բարեկամության փողոց 3 շենք, թիվ 1 բնակարան

մարզ,համայնք,հասցե

| | |
|---|---|
| Սեփականատեր | Դերենիկ Մուշեղի Հարությունյան |




4.Iհարկ
h=2.55,2.65

*Լրացուցիչ նշումներ.*
*Ծածկագիր 07-002-0070-0271*

| Մասշտաբ 1:100 | | | |
|---|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | | Մանվել Ղուկասյան |
| Որակավորման վկայականի համարը | | | 046 |
| Ստորագրություն | | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | | 03532649 |
| Ստորագրություն | | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 09.08.2024 | |
| | հատակագծի կազմման | 10.08.2024 | |

Կ.Տ.

# Շինությունների բնութագիր ք Աբովյան Բարեկամության փող. 3 շենք 1 բնակարան

| Հ | Դասակարգային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Հարկ | Հարկայնությունը | Մակերես (մ²) | | Բարձրությունը (մ) | Ծավալ (մ³) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օժանդակ | Հիմնական | | | | Քարե | Շլակե | Մոնոլիտ | Այլ նյութ | Զրոյական | մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | Փայտ | Երկաթբետոն | Հարավ | Հյուսիսային | Արևելք | Արևմուտք | Ներքին հարդարումը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | բնակելի | բնակարանN1,2,3 | 1 | 4 | | 13,90 | 2,55 | 35,45 | 2008 | | | | | | | | v | տուֆ | | v | | | | | |
| 1 | բնակելի | բնակարանN4,5 | 1 | 4 | 6,80 | | 2,55 | 17,34 | ք.կ.տ | | | | | | | | v | տուֆ | | v | | | | | |
| 1 | բնակելի | բնակարան | 1 | 4 | 33,85 | | 2,65 | 89,70 | ք.կ.տ | | | | | | | | v | տուֆ | | v | | | | | |

| Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
|---|---|---|
| 27 | 28 | 29 |
| 54,55 | 40,65 | 13,90 |

Կատարող ______ (ստորագրություն) Ս. Ղուկասյան (ստորագրություն) 10.08.2021թ. (ամիս,ամսաթիվ)

Որակավորման վկայականի 0 46 (համարը) 15.12.2011թ. (տրման ամիս,ամսաթիվ)

Իրավաբանական անձի 03Ա 081920 (պետական գրանցման համար) <<ԳԻՍ-ԱՐՏ>>ՍՊԸ (անվանում) ______ (ստորագրություն)

Կնիք: «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ, "ГИС-АРТ", "GIS-ART", 03532649

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2021 թվականի N 1489

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՍԻԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Մարուսյա Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 29-ի N Ք-353).

1. Աբովյան քաղաքի Ռոսիա փողոցի թիվ 6 շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 33.5 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 33.5 քառակուսի մետր արտաքին մակերեսով (30.9 քառակուսի մետր ներքին մակերեսով) բնակելի կառուցապատման ավտոտնակը համարել Աբովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված ավտոտնակի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ քաղաք Աբովյան, 2-րդ միկրոշրջան, 2/793 ավտոտնակ:

5. Սույն որոշումն ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը:

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Մարուսյա Հակոբյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 24
ք. Աբովյան

| | |
|---|---|
| Սեփականատեր | |
| Աբովյանի համայնքապետարան | |

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ ք. Աբովյան 2-րդ մ/շ 2/793

Մարզ, համայնք, հասցե

ՀՀ կառ. 26.05.2006թ. N 1022-Ն որոշում

Հողահատկացման հիմքը

| | Ձև 1 |
|---|---|
| Հաստատում եմ | 24.11.2021թ. |
| Համայնքի ղեկավար | Կ.Տ. |
| | Վ. Գևորգյան |
| անուն, ազգանուն, հայրանուն | |




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.00335 |
| Ծածկագիր | 07-002-0050-0051 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման համար |

*Լրացուցիչ նշումներ.*

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Շրջագծման (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4460206.33 | 8468459.14 | |
| 2 | 4460209.78 | 8468458.97 | 3.45 |
| 3 | 4460210.30 | 8468468.74 | 9.79 |
| 4 | 4460206.82 | 8468468.72 | 3.48 |
| 1 | 4460206.33 | 8468459.14 | 9.59 |

Մասշտաբ 1:200

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Տեգրան Սահակյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0378 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | Էյ Էյ Էս Ծառայություններ ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 04727363 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 24.07.2021թ. |
| | հատակագծի կազմման | 06.08.2021թ. |

Կ.Տ.

ՁԼ 1

| 1. Ավտոտնակ | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4460206.33 | 8468459.14 | |
| | | | 3.45 |
| 2 | 4460209.78 | 8468458.97 | |
| | | | 9.79 |
| 3 | 4460210.30 | 8468468.74 | |
| | | | 3.48 |
| 4 | 4460206.82 | 8468468.72 | |
| | | | 9.59 |
| 1 | 4460206.33 | 8468459.14 | |

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | Տիգրան Սաթակյան |
| Որակավորման վկայականի համարը | 0378 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը | Էյ Էյ Էս Ըքաունթինգ ՍՊԸ |
| ՀՎՀՀ | 04727363 |
| Ստորագրություն | |

| | | |
|---|---|---|
| ամիս ամսաթիվ | չափագրության | 24.07.2021թ. |
| | հատակագծի կազմման | 06.08.2021թ. |

Կ.Տ.

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ



| Կոտայքի մարզ | ք. Աբովյան | 2-րդ մ/շ 2/793 |
|---|---|---|

Մարզ, համայնք, հասցե

| Սեփականատեր | Աբովյանի համայնքապետարան |
|---|---|




*Լրացուցիչ նշումներ.*

| Մասշտաբ 1:100 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Տիգրան Սահակյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0378 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | Էյ Էյ Էս Հաշվապահություն ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 04727363 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 24.07.2021թ. |
| | հատակագծի կազմման | 06.08.2021թ. |

Կ.Տ.

# Շինությունների բնութագիր

| ՀՀ | Նախատեսված նշանակություն | Գործառական նշանակություն | Հարկ | Հարկայնություն | Մակերեսները (քմ) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | Թիթեղ | Շիֆեր | Կղմինդր | Այլ նյութ | Անվնաս | մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | Փայտ | Երկաթբետոն | Հատաման | Քարապատված | Ծեփված | Տուֆապատ | Առանց հարդարման |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | բնակելի | Ավտոտնակ | 1 | 1 | 30,9 | | 2,80 | 86,5 | 1990 | | | | v | | | | v | տուֆ | | v | | | | | 4 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Շինության ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում | |
|---|---|---|
| | Օրինական | Ինքնակամ |
| 27 | 28 | 29 |
| 30,9 | 30,9 | 0,0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2021 թվականի N 1488

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1327 ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿԻ ԴԱԴԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ և 38.1-րդ հոդվածների, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի նոյեմբերի 05-ի N Կ-05112021-07-0123 որոշումը և Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի N Ք-3551).

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի հատակագծերը հաստատելու և հասցեներ տրամադրելու մասին» N 1327 որոշման գործողությունը մասնակի դադարացնել՝ չեղյալ ճանաչել որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ տողը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 24
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2021 թվականի N 1487

## «ԹԵՀՄԻՆԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հիմք ընդունելով «Թեհմինա Դալլաքյան Սամվելի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի N Ք-3552).

1. «Թեհմինա Դալլաքյան Սամվելի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 47/1 հասցեում գտնվող 23.3 քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 159 կցվում է):

2. «Թեհմինա Դալլաքյան Սամվելի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 13 000 (տասներեք հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Թեհմինա Դալլաքյան Սամվելի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 23
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 159

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ*

Տրված՝ ***23 նոյեմբերի 2021թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«Թեհմինա Դալլաքյան Սամվելի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ գ. Պտղնի 2 փող. 35 տուն, ՀՎՀՀ՝ 43135766:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան 3-րդ միկրոշրջան թիվ 47/1, սպասարկման օբյեկտ:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հոկտեմբերի 2021թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2021թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2021 թվականի N 1486

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՄՈ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կամո Պետրոսյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 18-ի N Ք-3543).

1. Անհատ ձեռնարկատեր Կամո Պետրոսյանին տալ 2021 թվականի ընթացքում Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 1/14 հասցեում գտնվող 28.99 քառակուսի մետր մակերեսով խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 158 կցվում է):

2. Անհատ ձեռնարկատեր Կամո Պետրոսյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 84 000 (ութսունչորս հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Կամո Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 23
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 158

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ*

Տրված՝ ***23 նոյեմբերի 2021թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***Կամո Պետրոսյան, անհատ ձեռնարկատեր, ՀՀ, Կոտայքի մարզ ք. Աբովյան Նաիրյան փողոց շ. 6 բն. 39, ՀՎՀՀ՝ 43001392:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ, Կոտայքի մարզ ք. Աբովյան Նաիրյան փողոց թիվ 1/14, խանութ:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հունվարի 2021***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2021***-ը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2021 թվականի N 1485

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 1/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի հունվարի 26-ի N 06-Ա որոշումների, հաշվի առնելով Անահիտ Սեդրակյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 29-ի N Ք-381) և համաձայնությունը.

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ի N 02112021-07-0139 վկայական) 3-րդ միկրոշրջանի թիվ 1/15 հասցեում գտնվող բնակելի տունը՝ 243.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով, 194.31 քառակուսի մետր ներքին մակերեսով և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 124.9 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Անահիտ Սեդրակյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) բնակելի տան 1 քառակուսի մետրի համար՝ 7 800 (յոթ հազար ութ հարյուր) դրամ (տարածագնահատման 7-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.26).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4 524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) դրամ:

4. Անահիտ Սեդրակյանը պարտավոր է վճարել.
1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 1 895 400 (մեկ միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար չորս հարյուր) դրամ՝ բնակելի տան գինը.
2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 565 050 (հինգ հարյուր վաթսունհինգ հազար հիսուն) դրամ՝ հողամասի գինը.
3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Անահիտ Սեդրակյանի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Սեդրակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 23
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 նոյեմբերի 2021 թվականի N 1484

## ՆՈՎԵԼԼԱ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման, հիմք ընդունելով Նովելլա Մուսայելյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ի N Ք-3493).

1. Նովելլա Մուսայելյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2015 թվականի նոյեմբերի 04-ի N 04112015-07-0058 և 2021 թվականի հուլիսի 15-ի N 15072021-07-0065 վկայականներ) Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի թիվ 1/13/11 և թիվ 1/13/11/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերին՝ «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի նոյեմբերի 08-ին կազմված միավորման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել միասնական հասցե՝ քաղաք Աբովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 13/11 տարածք:

2. Նովելլա Մուսայելյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նովելլա Մուսայելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 23
ք. Աբովյան

| Սեփականատեր |
| --- |
| Նովելլա Սերգեյի Մուսայելյան |

# ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ

Կոտայքի մարզ ք. Աբովյան Օգոստոսի 23 փողոց թիվ 1/13/11 և թիվ 1/13/11/1

մարզ,համայնք,հասցե

Սեփականության վկայականներ N 04112015-07-0058 և 15072021-07-0065

իրավահաստատման հիմքը




| | |
| --- | --- |
| Մակերես հա | 0.003059 և 0.0015 |
| Ծածկագիր | 07-002-0049-0462 և 07-002-0049-0523 |
| Նպատակային նշանակություն | բնակավայրերի |
| Գործառական նշանակություն | հաս. կառ. |

*Լրացուցիչ նշումներ.*

| Մասշտաբ 1:100 | |
| --- | --- |
| Որակավորում ունեցող անձ | Վահե Կարապետյան |
| Որակավորման վկայականի համարը | 0339 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը | «ՋԻԷՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | 03532649 |
| Ստորագրություն | |
| ամիս ամսաթիվ — չափագրության | 02. 11. 2021 |
| ամիս ամսաթիվ — հատակագծի կազմման | 08. 11. 2021 |

Կ.Տ

Սեփականատեր: Նովելլա Սերգեյի Մուսայելյան

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ ք. Աբովյան Օգոստոսի 23 փողոց թիվ

մարզ,համայնք,հասցե

Սեփականության վկայականներ N 04112015-07-0058 և 15072021-07-0065

հողհատկացման հիմքը

Ձև 1

Հաստատում եմ 23. 11. 2021թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.004559 |
| Ծածկագիր | 07-002-0049- |
| Նպատակային նշանակություն | բնակավայրերի |
| Գործառական նշանակություն | հաս. կառ. |

*Լրացուցիչ նշումներ.*

| Շրջադարձի կետերի համարը | Հողամասի Կոորդինատներ Y | X | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 8468289.0479 | 4459931.8315 | 7.59 |
| 2 | 8468292.1813 | 4459938.7449 | 0.13 |
| 3 | 8468292.2352 | 4459938.8637 | 4.61 |
| 4 | 8468296.3979 | 4459936.8877 | 0.05 |
| 5 | 8468296.4166 | 4459936.9303 | 0.08 |
| 6 | 8468296.4945 | 4459936.8984 | 1.15 |
| 7 | 8468297.5338 | 4459936.4061 | 0.15 |
| 8 | 8468297.6666 | 4459936.3432 | 7.70 |
| 9 | 8468294.3353 | 4459929.4065 | 0.23 |
| 10 | 8468294.1244 | 4459929.5056 | 1.00 |
| 11 | 8468293.2193 | 4459929.9309 | 0.67 |
| 12 | 8468292.6154 | 4459930.2146 | 0.12 |
| 13 | 8468292.5619 | 4459930.1057 | 3.91 |
| 1 | 8468289.0479 | 4459931.8315 | |

| Մասշտաբ 1:100 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Վաճե Վարդանյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 02.11.2021 |
| | հատակագծի կազմման | 08.11.2021 |

Կ.Տ.

| 1. սպ. օբյեկտ | | | |
|---|---|---|---|
| Շրջադար ծային բեկման կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | Y | X | |
| 1 | 8468289.0479 | 4459931.8315 | 7.59 |
| 2 | 8468292.1813 | 4459938.7449 | 0.13 |
| 3 | 8468292.2352 | 4459938.8637 | 4.61 |
| 4 | 8468296.3979 | 4459936.8877 | 0.05 |
| 5 | 8468296.4166 | 4459936.9303 | 0.08 |
| 6 | 8468296.4945 | 4459936.8984 | 1.15 |
| 7 | 8468297.5338 | 4459936.4061 | 0.15 |
| 8 | 8468297.6666 | 4459936.3432 | 7.70 |
| 9 | 8468294.3353 | 4459929.4065 | 0.23 |
| 10 | 8468294.1244 | 4459929.5056 | 1.00 |
| 11 | 8468293.2193 | 4459929.9309 | 0.67 |
| 12 | 8468292.6154 | 4459930.2146 | 0.12 |
| 13 | 8468292.5619 | 4459930.1057 | 3.91 |
| 1 | 8468289.0479 | 4459931.8315 | |

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Վահե Վարդանյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 02.11.2021 |
| | հատակագծի կազմման | 08.11.2021 |

Կ.Տ.

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ ք. Աբովյան Օգոստոսի 23 փողոց թիվ

մարզ,համայնք,հասցե

| Սեփականատեր | Նովելլա Սերգեյի Մուսայելյան |
|---|---|




1. նկուղ
H=0.00-1.20
h=2.45
D=0.25
d=0.08-0.20




1. Iհարկ
H=3.00
h=2.70
D=0.20-0.30

Լրացուցիչ նշումներ.

| | | |
|---|---|---|
| Մասշտաբ 1:100 | | |
| Որակավորում ունեցող անձ | | Կամո Կարապետյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 02.11.2021 |
| | հատակագծի կազմման | 03.11.2021 |

Կ.Տ

# Շինությունների բնութագիր ք Աբովյան Օգոստոսի 23 փող.

| << | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Հարկ | Հարկայնությունը | Մակերես ($մ^2$) | | Բարձրությունը (մ) | Ծավալը ($մ^3$) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օգտակար | Ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կղմինդր | այլ նյութ | ավարտուն | մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | փայտ | երկաթբետոն | [illegible] | երեսպատված | ներկված | ապակեպատ | առանց արտաքին հարդարման |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | հասարակական | սպ օբյեկտ | նկուղ | 1 | 37,16 | | 2,45 | 91,04 | 2015 | | | | | | | | v | բետ | | v | | | | | 4 |
| 1 | հասարակական | սպ օբյեկտ | 1 | 1 | 29,70 | | 2,70 | 80,19 | 2015 | v | | | | | | | v | տուֆ | | v | | 1 | 1 | | 2 |
| 1 | հասարակական | հարթակ | | | 4,45 | | | | 2015 | | | | | | | | | | | | | | | | |

| Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում | |
|---|---|---|
| | Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
| 27 | 28 | 29 |
| 71,31 | 71,31 | 0,00 |

Կատարող ______ (ստորագրություն) Վ.Վարդանյան (ստորագրություն) 08.11 2021թ. (ամիս,ամսաթիվ)

Որակավորման վկայականի 339 (համարը) 14.05.2014թ. (տրման ամիս,ամսաթիվ)

Իրավաբանական անձի 03Ա 081920 (պետական գրանցման համար) <<ԳԻՍ-ԱՐՏ>>ՍՊԸ (անվանում) ______ (ստորագրություն)

ԿՈՏԱՅՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԳԻՍ-ԱՐՏ» "ГИС-АРТ" "GIS-ART" 03532649 № 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2021 թվականի N 1483

## ՍՎԵՏԼԱՆԱ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Սվետլանա Մկրտումյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 18-ի N Ք-3537).

1. Սվետլանա Մկրտումյանին տալ սպասարկման օբյեկտի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. Սվետլանա Մկրտումյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սվետլանա Մկրտումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. նոյեմբերի 22
ք. Աբովյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
### (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

*N 175 «22» նոյեմբերի 2021թ.*

Օբյեկտ *սպասարկման օբյեկտի կառուցման*

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

*«Աշխատանքային նախագիծ» (միջինից բարձր, II-րդ կատեգորիա)* նախագծային փաստաթղթերի մշակման համար

(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 1/8/2/1, ծածկագիր՝ 07-002-0069-0031*

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *Սվետլանա Մկրտումյան (ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Եղբայրության փ., 2 շ., 44 բն., հեռ. +37498606160)*

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 17112021-07-0015 վկայական՝ տրված 17.11.2021թ., էսքիզային նախագիծը*

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

Առաջադրանքի գործողության ժամկետը *մեկ տարի:*

(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1.Հողամասը գտնվում է *նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման*

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2.(*) Հողամասի չափերը *0.01344 հա*

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը, (հա)

3. Հողամասի առկա վիճակը *անբարեկարգ*

